

Հարց

Անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է, արդյո՞ք, մայրության նպաստ, եթե նա հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակ չի դադարեցնում գործունեությունը:

Պատասխան

Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրվանից: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու օր է համարվում իր հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացրած՝ անորոշ կամ որոշակի ժամկետով գործունեություն չիրականացնելու (գործատու չհանդիսանալու՝ վարձու աշխատող չունենալու և ֆիզիկական անձանց աշխատանքը, ծառայությունները փաստացի չօգտագործելու, ինչպես նաև որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանց կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություններին եկամուտներ փաստացի չվճարելու) մասին հայտարարությունում նշված օրը: Ընդ որում, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստ չի վճարվում, եթե ժամանակավոր անաշխատունակությունը ծագել է օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության դադարեցումից (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցումից) հետո:

Հարց

Ո՞վ պետք է կատարի մայրության նպաստի հաշվարկումը, եթե վարձու աշխատողը միաժամանակ հանդիսանում է նաև անհատ ձեռնարկատեր:

Պատասխան

Վարձու աշխատողը, միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսանալու դեպքում, մայրության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է հիմնական աշխատավայրի գործատուն:

Հարց

Եկամտային հարկը վերադարձվում է, արդյո՞ք, եթե հիփոթեքային վարկը փաստացի չի ուղղվել անհատական բնակելի տան կառուցմանը:

Պատասխան

Ոչ: Հարկային մարմնի կողմից եկամտային հարկի վերադարձ չի կատարվում (վարկառուի դիմումը մերժվում է), եթե ներկայացված փաստաթղթերով կամ երրորդ անձանցից ստացած տեղեկություններով պարզ է դարձել, որ հիփոթեքային վարկը փաստացի չի ուղղվել բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանը:

Հարց

Անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում շինարարության թույլտվության գործողության ժամկետը ավարտվելու դեպքում վարկառուին շարունակվում է, արդյո՞ք, եկամտային հարկի վերադարձը:

Պատասխան

Անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում շինարարության թույլտվության գործողության ժամկետը ավարտվելու դեպքում վարկառուն հարկային մարմին պետք է ներկայացնի անհատական բնակելի տան շինարարության շահագործման փաստագրման ակտի և սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենները կամ շինարարության գործող թույլտվությունը: Ընդ որում, այն վարկառուները, ովքեր մինչև 2016 թ. փետրվարի 20-ը հարկային մարմին են ներկայացրել ժամկետը ավարտված շինարարության թույլտվություն, նրանք ևս մինչև 2016 թվականի ապրիլի 20-ը պետք է ներկայացնեն վերոնշյալ փաստաթղթերը: Նշված փաստաթղթերի չներկայացման դեպքում դադարեցվում է եկամտային հարկի վերադարձը:

Հարց

Հարկ վճարողը հունվարի 10-ին հարկային մարմնի կողմից ստացած հավաստագրի համաձայն մանրածախ առևտրի գործունեության մասով օգտվում է առևտրի հարկի արտոնությունից: 2016թ. փետրվարի 17-ից հարկ վճարողը սկսում է զբաղվել նաև հանրային սննդի գործունեությամբ: Տվյալ դեպքում, հարկ վճարողը հանրային սննդի գործունեության մասով կարող է, արդյո՞ք, օգտվել արտոնությունից:

Ոչ: Հավաստագիր ստանալուց հետո նոր գործունեության տեսակով զբաղվելու դեպքում, վերջինիս մասով արտոնություն չի տրամադրվում: Տվյալ դեպքում, հարկ վճարողը հանրային սննդի գործունեության մասով արտոնությունից չի օգտվում և հաստատագրված վճարը պետք է հաշվարկի «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով:

Հարց

Որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար դուրս գրված և մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքում հարկային հաշիվների վերաբերյալ չներառված տեղեկությունները հետագայում հարկ վճարողը ինչպե՞ս պետք է ներառի տեղեկանքում:

Պատասխան

Տեղեկանքում դուրս գրված կամ մատակարարներից ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներառելու կամ դրանք սխալներով ներկայացնելու փաստը ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում հարկ վճարողը այդ հաշիվների դուրսգրման կամ ստացման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշտված տեղեկանք: